ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2016 թվականի N 37 -Ա

«ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԺԱՄԱՆԱԿ՝ ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՓԼՈՒԶՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2015թ դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2016թ հիմնական միջոցառումների պլանը և ծրագիրը հաստատելու մասին» N178-Ա որոշմամբ հաստատված պլանի 11-րդ կետի 11.1 ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի 2016թ. ապրիլի 21-ի N 20/544 զեկուցագիրը, **ո ր ո շ ու մ ե մ՝**

1. «Կապանի N12 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2016թվականի մայիսի 13-ին անցկացնել «Փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը երկրաշարժի ժամանակ՝ դպրոցի մասնաշենքի փլուզման դեպքում» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն:
2. Ուսումնավարժության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ փոխգնդապետ Բ. Զաքարյանին:
3. Ուսումնավարժության ղեկավար Բ. Զաքարյանին՝
1) ապահովել նախապատրաստական աշխատանքների իրականացումը, փաստաթղթերի մշակումը և ծանուցումը ուսումնական վարժության մասնակիցներին:
2) ուսումնավարժության ավարտից հետո արդյունքները ներկայացնել քննարկման:
4. Ուսումնավարժությունում ընդգրկել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը, Հայաստանի Հանրապետության ոստիկանության

Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժինը, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Սյունիքի ԳԳՄ, «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի N12 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ «Տաթև» մասնաճյուղը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2016թ. ապրիլի 25
ք. Կապան